

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ»... կամ Tiflis. Rédaction «Mschak»:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են խրատանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Ներքուհի Մարիամ Գաւթեան Բէգնազարեանց և որդիքը, սրտի ցաւով յայտնելով Թիֆլիսի Գամայեանց եկեղեցու միաբան... ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԲԵԳՆԱԶԱՐԵԱՆՑԻ

ԲԷԿԱՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԻՍԵԱՆ ՎԱՐԴՊԱՏՐԻԿԵԱՆՆԵՐԸ սրտի ցաւով յայտնելով առաջինը իր սիրելի որդու, իսկ վերջինը իր թանկագին եղբոր զերմանական ուսանող... ՍԱՐԱՀԱՄ ՎԱՐԴՊԱՏՐԻԿԵԱՆԻ

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ Առուցիչները վիճակը. Էջան բառեր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սարգիս Բէգնազարեան. Շոտլանդացիները երկաթուղու կայարանում. Նամակ Գարաշիչազից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եղիշտական փաշաների դատար. Նամակ Թիւրքայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՐԵՐ.—ՀԵՌՈՎԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի դժուր Բագրատի արհեստագործների կեանքից:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԻՃԱԿ Արտասահմանում լոյս տեսած մի քանի նորագոյն վիճակագրական հետազոտութիւններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մ Ի Ք Ա Ն Ի Գ Ի Ծ

ԲԱԳՈՒՒ ԱՐՆԵՍԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ II.

Մինչև այժմ, արհեստագործ կենսական անհրաժեշտ պիտոյքները՝ հաց, միս, թէյ, շաքար և այլն վերցնում է խանութպաններից ապառիկ: Շարժվել կամ մի անվայ ընթացքում ինչ որ վերցնում են, նշանակում են տետրում: Արժէքը, քանակութիւնը խանութպանին է նշանակում. քանակութիւնը ասում են, իսկ նա տետրում նշանակում է և տալիս: Ամեն ժամանակ արհեստագործ անկարող է լինում անձամբ գնալ. առաւօտները վաղ գործի գնալով, տանցիկներին է թողնում վերցնելը: Տանցիկներից կամ կանաչք են գնում և կամ երկամսերի բերանով են ապագում: Երկու դեպքերում էլ խանութպանի լրջմտամտքին ու կամքին է մնում բանը: Երկամսերը շատ անգամ անկարող են լինում որոշել լաւը վատից, չեն կարողանում ըմբռնել խանութպանի նուրը խարդախութիւնները. իսկ կանաչք եթէ գնում էլ են, խանութի դռնից յաճախ ներս չեն մտնում: Մի կողմից հայկական ամօթխածութիւնը, միւս կողմից «ապառիկ» վերցնելը՝ զրկում են հասարակ վտանգութիւնից, սակայն, կաշկանդում են նրանց լեզուն: Եւ եթէ մէկը փորձում է զգոհութիւն յայտնել, թէ վերցրած ապրանքը լաւը չէ, իսկոյն հետեւում է խանութպանի.—Ինի նա հացթուխ, թէ մանրակաճառ, թէ մտավաճառ, կձու նկատողութիւնը՝ «փողը նաղը էք տալիս, ի հարկէ, չէք հաւանի...» Արհեստագործ ստիպված լինելով ապառիկ վերցնել, ստիպված է լինում, համեմատաբար վատ

մեղաց ընթացքում սահմանված կարգով կրք ուսուցիչը չէ կարողանում որոշ ժամանակներում է իր զործով և թէև յոգնում և ուսումնական տարվայ վերջը, բայց արքանում պաշտպանել իր անձնաւորութիւնը կողմնակի ճնշումներից, յոյս չունի յեղիով՝ նա նորից կարողութիւն է Գիւղե-մի քանի տարի մի օր և է դարձում մը-ը կրքանում տալ ուսուցիչներին բոլոր յարմարութիւնները և կեանքի զիւրութիւններ, և այդ պատճառով թաղում են անարժեք թեւով ուսուցիչներ, լուսաւորութիւն գործին ծառայող այդ մշակութիւն: Գիտողութիւնները ցոյց են տալիս, զանկու, նոր սակարկութիւնների մէջ մշտոր հիւանդութիւնների մեծագոյն մասը ներու և յաճախ նոյն իսկ առանց գորաառջացած է եղել մրսելուց, բնակարանների, դասարանների աննպատակայարմար շինութիւնից և կենսական անյարմարութիւններից:

Արեւմտեան այգիստով ուսուցչական պարագայները ինքն ըստ ինքեան քայքայող և վրասակար չէ, և նա դառնում է վտանգաւոր, շնորհիւ կողմնակի հանգամանքների: Մեր դպրոցական կեանքի վերաբերութիւնում վիճակագրական հետազոտութիւններ չեն կատարված. բայց ամենաթեթեւակարկը ցոյց է տալիս, որ հայոց դպրոցական ուսուցչի կեանքի առողջապահական պայմանները շատ և շատ աննպատակաւ են ոչ միայն յետ ընկած զինդրում, այլ և յաճախ մեր փողը և մեծ քաղաքներում: Առուցիչի համար շատ դժուար է, եթէ անկարելի չէ բոլորովին, գտնել իր համար փողը ի շատ էլա սենեակ, որը բաւական ընդարձակ լինէր, ունենար կարգին լուսաւորութիւն, յարմար դասարան, որ տաքացնէր սենեակը մինչև պահանջված աստիճանը: Նա յաճախ անկարող է օր օրի վրա ստանալ կանոնաւոր պատրաստած կերակուրներ: Իսկ այն անկարողութիւնը, որ սիրում է դպրոցական կառավարութեան գործում,

ի ամուսինը դիմում են դրկից ների աջակցութեան: Ամեն մի դրկից գիտէ իր հարեանի անցկացրած կեանքը, ճանաչում է նրա ընկերներին, գիտէ նրա յաճախելի տեղերը: Մի առանձին հետազոտութեանը կարողանում են որոնել և գտնել կամ հարբած ու ընկած դրութեան մէջ, կամ խաչտատակ զեֆի վրա, և կամ թուղթ խաղախաՄի կերպ համոզելով՝ և քաղցրութեամբ՝ և յանդիմանութեամբ, վերցնում տուն են բերում:

Վերադառնելով տուն, զեֆով արհեստագործ եթէ փողը ի շատ է նամուսաւոր է, առանց խոսելու պառկում, երեսը ծածկում քնում է. ձայն, ծպտուն չէ հանում, մօր կամ կնոջ յանդիմանութիւնները ու կշտամբանքը լուռութեան է տալիս.— Իսկ եթէ աննամուս մարդ է, ոչ միայն չէ լուռ, այլ ամեն մի հարցին հայտնաւորում է պատասխանում, ամեն մի կշտամբանքին ու անձեքին ըր-առուցներ է ուղղում: Այդպիսի դեպքում, երբ ամուսինը դադանաբար ծեծում, հարուածներ է տալիս կնոջ, կինը միայն լուռ, սրտածակ լացով է սփոփում իր վիշտը... Հայ արհեստագործ կինը ընդունակ չէ բողբոջելու. այդ անկնայանի բարբարոսութեան, այդ անիրաւութեան դէմ նրա ձեռքերը չեն դարձնում նոյն իսկ ընդդիմանութիւն, պաշտպանվելու: Ամօթխածութիւնը այն ստիճան կաշկանդել է հայ կնոջ, որ նա պատրաստ է աւելի շուտ հարուածներ կրել իր ամուսնուց, քան թէ այդ ընտանեկան ամօթխա միջնադէպը հրապարակ հասնել, ուրիշներին իմաց տալ: Ռուս կնոջ երբ ծեծում է ամուսինը, նա գոռում, գոչում, հայտնաւորում է վաղում պաշտպանութիւն գտնելու. իսկ հայ կինը նոյն իսկ իր դրկիցներից թաղցնում, գաղտնի է պահում: Մայրաքնի դեպքերում միմյան հօրանց տուն է փախչում:

ԷԺԱՆ ԲԱՌՆԻՐ

Տարանգաւոր ուսուցիչը Շէշերին շատ անգամ գանգատվում էր, որ մի շարք սրբազան բառեր, ինչպէս ազնուութիւն, խղճմտանք, անձնուիրութիւն, հայրենասիրութիւն, լուսաւորութիւն, բողոքական մտացիական արկիք են զգված, և ոչ որ նրանց չէ յիշատակելու: Սրբազան չէ զիկավարվում:

Եթէ երեւի ուսուցիչը դժբաղդութիւն ունենար զէթ մի անգամ ձեռք առնելու հայոց խաւարած օրգանները, (երջանիկ է, որ ձեռք չէ առել) նա կը տեսնէր, որ այդ օրգանների մէջ, մտավա-

Ամեն բան անցել է արդէն. և՛ զեֆ, և՛ ծեծ, և՛ լաց: Այժմ մի բան է մնացել պարտքեր: Փող չը կայ պարտքեր վճարելու: Պար է սպասել երկու, երեք շաբաթ էլի սպասել մինչև միւս պարտքից: Պարտաւէրը թէև դժգոհ են, բայց էլի շարունակում են ընխիստաւ: Եւ հարկադրված են այդպէս անելու: Եթէ չը շարունակեն ապառիկ տալ, այն ժամանակ հաւանականաբար պիտի զրկվեն և առաջվայ տրուածները: Այն դեպքում, երբ խանութպանը խոստումներ էր, այն ժամանակ հարեաններից կամ արհեստագործների ընկերներից ունեւր երաշխաւորում են նրա փոխարէն և պարտաւորվում, բո պարտքից իրանք բերեն տան:

Խանութպանները, մանրավաճառներին առաջ այդ աստիճան պարտաւորվելը բացի նրանից, որ ընխիստաւ մուշտարու լեզուն կարծ է պահել տալիս, այլ և երբեմն վտանգում է նաև ընտանիքի բարոյականութիւնը: Ընտանիքի շուրջ աշխատաւոր ինքը տանից միշտ բացակայ լինելով՝ տան հոգները թողնում է ընտանիքին. ընտանիքը պէտք է հաց վերցնի, ընտանիքը պէտք է մանրավաճառի մօտ գնայ՝ մանրաւոր վերցնի և այլն: Եթէ ընտանիքում փոքրիկ տղայ կամ աղջիկ կայ, նրանք են այդ միջնորդի դերը կատարում. իսկ եթէ չէ, այն ժամանակ տանտիրոջ վրա է ծանրանում այդ հոգնու և Տանտիրոջը եթէ միջնաճառակ կամ հասարակութիւն է, ինչն է դժուր խանութ, իսկ եթէ ջանիլ է, ինքը չէ դժուր, գլխաւորապէս յանձնարարում է խանութպանին, որը կամ զրկում է և կամ անհնաւիս յաճախ ինքն է տանում: Այսպիսի հանգամանքներում տեղի են ունենում աւելի սերտ յարաբերութիւններ...

Չորս պատի մէջ մեծացած շամանիցի կինը, իր կամակար մարդու հայտնաւորին ու ծեծին

Ճան դրողներն շնորհիւ, այդ բաները ոչ թէ միայն չեն մտադրված, այլ դարձնել են մասնաշրջանները ճանաչելու համար:

Կար ժամանակի որ հայոց խաւարած մամուլը քաջութիւն ունէր խոստովանելու, որ ինքը դէմ է ամեն մի նորութեան, դէմ է նոր գաղափարներին, նոր մտքերին, նոր հոսանքներին... նա չէր ընդունում ոչ ժողովրդական իրաւունքը, ոչ կանանց հարցը, ոչ որ և է ընթացում ընտանիքի, դպրոցի, կամ հասարակութեան մէջ: Բնագիտական, խաւարած մամուլը գովելի պարզութեամբ, առանց ամեն օր թիւերի փոխելու, առանց աչքակապութիւնների, հրապարակով յայտարարում էր, որ ինքը չէ ճանաչում ոչ կանանց հարցը, ոչ ժողովրդական իրաւունքները, և ոչ նոր մտքերը, ոչ էլ որ և է ընթացում և ուղում է որ ամեն բան մնայ այնպէս, ինչպէս կայ, ինչպէս եղել է:

Այդ խաւարած մամուլի այժմեան ներկայացուցիչները, այժմեան անշուքը, ամեն քայլափոխում ընկճիող շարունակողները իրանց նախորդների քաջութիւնն էլ չունենալով, դրանք համոզմունքներով հասկացողութիւններով, ուղիղ կողմնութեամբ նայելով ինչ որ իրանց մտաւայն էր նախորդներն էին, տարբերում են նրանցից նրանով, որ հասարակութիւնը խաբարու, միամիտներին մոլորեցնելու համար սխալ են իրանց դժուժ գործերը և մեռած մտքերը թաղանջի դեղեցիկ խօսքերի տակ, զարդարել խաբարու բաներով:

Եւ ահա, հայոց այժմեան խաւարածներն օրդանները, որոնք ամեն տեսակ կերպարանք ընդունում են և ամեն միջոցի դիմում են, որպէս զի խախտեն ժողովրդի իրաւունքները, թող չը տան որ և է ընթացում դպրոցի, կենքերի, հորեղբայրութեան կամ ընտանիքի մէջ, որոնք եզրուական ներք միջոցներով հաւաքում են ամեն մի նոր մտքը, ամեն մի նոր գաղափար, իրանց կեղծ յուրաններում և իրանց վարձկան թիրթիր մէջ սխալ են խօսել և սուրբական քայքայողութեան, լուսաւորութեան մասին, պաշտպան են հանդիսանում կանանց հարցին, ցաւակից են ձեւանում ժողովրդին և նրա շահերին, և միշտ խօսում են խղճմանքի, բարոյականութեան, ազնուութեան, հայրենասիրութեան, անձնաիրութեան մասին,

ընտելացած ամուսինը առիթ է ունենում պատահելու մի օտար քաղաքացու, որը անհամեմատ է քաղաքացուին, քաղաքի, և կամակատար է... Շատերից մէկը: Մտովի անցնելու մի ներկարար երկու ամսով Բագուից բացակայում է: Բացակայելուց առաջ իր ծանօթ թուրք մանրավազան յանձնարարում է, թէ ինչ հարկաւորութիւնները տայ, վերադառնալուց յետոյ կը վճարի: Երկու ամիսը դառնում է վեց ամիս: Մանրավազանը ճշդութեամբ կատարում է իր խոստումը, մտնելով ինչ պահանջում են, զրկում է:

Երկու ամիս անցնելուց յետոյ թուրքը անձամբ գնում է ներկարարի տունը՝ խմանալու համար, թէ երբ պէտք է վերադառնայ: Այդտեղ նա առիթ է ունենում ծանօթանալու ներկարարի ջանքին կնոջ հետ, որը ընտելում է միայն իր 11 տարեկան որդու հետ մի տան մէջ: Կրանից յետոյ թուրքը սկսում է աւելի յանձնար արցունք թիրթիր անել, շատ և շատ խոսակցել հարցնել և վերջապէս մտերմանալ... Մի ժամանակ այսպէս մնալուց յետոյ, կինը իր որդու հետ տեղափոխվում է թուրքի բնակարանը: Հէնց այս րօպէս էլ միասին են ապրում, երբեք ինքն իրանց խախտում առևտուր է անում...

Մի քանի ամիս առաջ այս մասին մեծ խօսակցութիւններ ծագեցին թուրքերի և հայերի մէջ: Լուր էր պտտվում որպէս թէ երկխոսին մասնագիտացել են, թէ կինը թուրք կնոջ շուրթով մէջք է գնում և այլն և այլն: Մի խումբ հայեր մի կիրակի գնացին, և խանութից ոյժով երկխոսին վերցրին ու բերին օտարկանտուն: Գործը ընտելութեան ընկաւ և հասաւ դատարանին: Մի քանի անգամ կնոջ, երկխոսին, թուրքին և մի քանի վկաներին դատի կանչեցին, բայց հետևանք չունեցաւ:

Կինը պնդում էր, թէ մէջոց չունի ապրելու, թուրքի մօտ ծառայում է և ապրում... Հիմա կը-

և այդ էլ միշտ ուղեորված բաներով վերադրված ձեւով...

Կա մի անկում է, որին հասել են այդ մարդիկ... սրտում դէմ լինել ամեն մի նոր գաղափարին, թշնամի քաղաքակրթական հոսանքին, հակառակորդ ամեն տեսակ ընթացիկների և հարցերի: Վերջապէս դորձով ոտի տակ ազնուութիւնը, խղճմանքը և ամեն տեսակ բարոյական սկզբունքները... բայց մի և նոյն ժամանակ խօսքով, դատարկ բառերով պաշտպան, հովանաւորող և կողմնակից լինել այդ բոլորին... ահա այն բարոյական զգացիկ սյունակութիւնը, որին հասել են խաւարած մամուլը և նրա բոլոր սիւները ու բնիկ գաղափարները:

Երէկ ձեռնարկ էր շեկեղեցու պաշտպան ձեւանայ, ձեւանում էին, այսօր հարկաւոր է նոր գաղափարներին անունից խօսել, խօսում են երէկ ձեռնարկ էր ասել ինչ է ժողովուրդը... ոչխար, առում էին, այսօր ձեռնարկ է ժողովրդին պաշտպան հանդիսանալ... հանդիսանում են: Վերջապէս այսօր ձեռնարկ է դրական բարոյականութիւն պաշտպանելի, ազնուութիւնից խօսել, խղճման արժեքի մասին ձեռնարկ... ձեռնարկում են, ինչ փոխել, որ իրանք այդ բոլորը ոտի տակ են առել և իրանց սրտի կտրուներում այդ բոլորի վրա ծիծաղում են:

Ամենայնից, ամենագեղեցիկ բաները հացկատակի, բնիկաբան գործերի բերանում և զրչի տակ է ժանաջ ան, կորցրին իրանց վեճ, սրբազան նշանակութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ԳԱՆԱԿԱՆ ԲԵՆԵՎՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 16-ի դիւնը, երկրորտու ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Սարգիս քահանայ Բեգնազարեան, մօտ 55 տարեկան:

Մեր քահանայական դասակարգի համար, որի մէջ մասնակցութիւն էր համարել արժանաւոր նոկերականներին, և մեր դպրոցական ասպարիզը համար, ուր շատ քիչ աստիճան ստացաւ... Բեգնազարեանի մահը վերին աստիճանի զրաւի է և ցաւալի:

Ապրիլի 25 տարի է Բեգնազարեան գործում է հայոց դպրոցներում: Աւարտելով իր ուսումը Ներսիսեան դպրոցում, մի առ ժամանակ մնա-

նոջ ամուսինը վերադարձել է: Ուրիշները ասում, յորդորում են, որ հետեի, գոնէ երկխոսին վերցնի թուրքի ձեռքից, ուշադրութիւն չէ դարձնում: Մի քանի անգամ փորձեց յետոյ այժմ բոլորովին մտադրութեան է տուել և ապրում է մի ուրիշ կնոջ հետ... Թուրքերը մի առանձին նշանակութիւն են տալիս այս գէպին... նրանց առաջ մի տեսակ կրօնական բնաւորութիւն է ստաւել ինչպէս, որով շատ հետաքրքրվում են: Կատից երկխոսին մի մեծ բաղմութիւն չըբացատրել էր դատարանի ել ու մտքը և սպասում էր վախճանին...

Կեղծ, որ արհեստագործներ մէջ ծագում է յաճախ շատ ջնջին պատճառներից, վերջանում է մեծ մասամբ խնջալով և ատորանակով: Թուրքերից սովորած հայ արհեստագործներից շատերը են դէպքը իրանց համար անբաժան ընկերներ են դարձնել:

Այդ կողմից աւելի աչքի են ընկնում Շամախու կողմի արհեստագործները: Կրանից շատ շատերի գրպանում, թեքերի մէջ և չուխայի տակ անշուշտ կը գտնէք կամ խնջալ և կամ ատորանակ:

Ձեռք կրելը անբան վարպետաբար յարմարեցրած է, որ անհորձ մարդը, եթէ որոնելու էլ լինի, չէ կարող գտնել: Թաղաքում այդ զէպքերը տեղիից շարժվում են զլուստորապէս այն զէպքերում, երբ պատիւ է շոջափում, երբ քաջութեան, արիւթեան և շնամուտի խնդիր է հանդէս գալիս:

Տեղական ծխախոտի մի գործարանի վարպետներից մէկը մի ուրիշ վարպետից մի բուրլով պարտք է վերցրած լինում: Մի քանի անգամ պահանջում է, չէ տալիս: Մի երրորդը փողը տուրդի բարեկամը, պարտք վերցնողը ընկերը նկատելով, որ իր բարեկամը ընկերոջ շատ է

լով Պետերբուրգում, այդտեղից տեղափոխվելով Երևան, ուր և աւարտեց իր ուսումը: Կրանախտի մանկավարժական սեմինարիայում, Բեգնազարեան վերադարձաւ հայրենիք, և անմիջապէս նուիրվեց մանկավարժական գործունեութեան: Կա սկսեց Ալեքսանդրապոլից, որտեղ վարեց հայոց դպրոցների տեսչի պաշտօնը, ապա գնաց Երևան, ուր երկար տարիներ վարեց թեմական դպրոցի տեսչի պաշտօնը, և այդտեղից էլ վերջապէս տեղափոխվեց Թիֆլիս, ուր կարճ միջոցից յետոյ, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի ձեռնով, քահանայ ձեռնադրվեց, և ապա ընտանեկան Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնը:

Տեսչի պաշտօնը Բեգնազարեան երկար չը վարեց, բայց մինչև վերջին տարին էլ մնաց Ներսիսեան դպրոցում կրօնուսույց, և միայն մի քանի ամիս առաջ, ծանր հիւանդութեան պատճառով, ստիպվեց թողնել այն ասպարէզը, որին նա ամբողջ 25 տարիներ նուիրեց իր բոլոր ոյժերը, եւ անցաւ և ժամանակը:

Մանկավարժական գործունեութեան հետ միասին վերջին տարիներ քահանայական կոչում ընդունելով, հայր Բեգնազարեան, իր օրինակելի յարաբերութիւններով դէպի ծով, և իր քարոզչական գործունեութեամբ և իր քարոզչական գործունեութեամբ, որոնք շատ անգամ անազնի բաղձութիւն էին դրաւում դէպի Գեորգիանց եկեղեցին, կարողացաւ մի վերին աստիճանի պատուաւոր տեղում Թիֆլիսի հոգևորականների շրջանում: Կրանաւորը դու երկար ժամանակ բաց կը մնայ...

Բեգնազարեանի անուր անյայտ չէ և հայոց մամուլի մէջ: Կա երկար տարիներ թղթակցել և աշխատակցել է «Մշակի» դատարանից: Իսկ վերջին տարիներս նա գրում էր կրօնական-բարոյականութեան յորեղանքները «Տարազ» մէջ: Որքան մեղ յայտնի է, նա ունի մի քանի աշխատութիւններ, որոնք դեռ չեն տպագրվել: Երկու տարի առաջ նա ապագայը չէր օճա գիտութեան մի դասակարգը, որի դէմ յարուցել անմիտ հալածանք, արգելեցին գործածել դպրոցներում, սակայն մի քանի ամիս առաջ, կաթողիկոսական հրամանով, այդ գիրքը հանվեց միջնադարեան խաւար բանագրանքի տակից, և նորից թողարկվեց գործածելու դպրոցներում:

Մի կէտէ... Երբ ծանր տեղափոխութեան պատճառով, անկարող էր վարել իր պաշտօնները, տանից չէր դուրս գալիս, և տանիցում էր սրտի ծանր հիւանդութիւնից: Սակայն չը նայած իր ֆիզիկական ամուլանքներին, նա շարունակում էր մինչև իր կեանքի վեր-

նեղացում, ժամանակ անժամանակ ընկերներին, ծանօթների մօտ երեսօլն է տալիս, վերաւորվում է և զգուշացնում իր բարեկամին, որ չը անհանգստացնէ ընկերոջը, երբ ունենայ, կը տայ: Բարեկամը և վերաւորվում է, որ նա իր բարեկամը լինելով իր շահերը չէ պաշտպանում, այլ օտարի կողմն է բռնում, այդ պատճառով պահանջը աւելի սաստկացնում է: Բարեկամ վարպետը, որ մի քանի տղայ է լինում, ընկերների ներկայութեամբ մի անգամ յայտարարում է նրան. «Եթէ չես համբերում, հապա զօտով առ, տեսնեմ ինչպէս ես առնում...»

Սրանից արդէն ծագում է պատուի խնդիր: Պահանջողը եթէ տղամարդ է, եթէ գտակ ունի զլիւրի, պէտք է զօռով էլ լինի—առնի, ետ չը կանգնի իր պահանջից: Իսկ միւսը, եթէ թեքաժող լի զող չէ, պէտք է մինչև վերջ պաշտպանի, և պնդի, չը թողնի, որ տայ...

Ընկերների մի խումբ ներկայ է եղել այդ խօսակցութեան ժամանակ. նրանց անողջ կարծիքը օրից օր աւելի լայն ծաւալ ստանալով՝ դատարան է պատրաստվում... Երկու բարեկամ հակաձողակ են մի բուրլի տալու, չը տալու մասին, և իրանց տղամարդութիւնն են ուղում ցոյց տալ: Փող պահանջողը կը լինէր 33—35 տարեկան, իսկ պաշտպան հանդիսացողը՝ 23—24 տարեկան:

Արհեստագործների մէջ լսելու մի փոքրը դեռ յարգել է: Մեծ վարպետը իր պատիւն ունի, նրա ամեն մի խօսքին, ամեն մի նկատողութեան ու հայտնաբերել չէ կարելի պատասխանել: Մինչև փեփով չը լինի, փողը վարպետը մեծի ճշմարտի չէ չէ չէ առ, բայց մեծութեան այդ պատիւն էլ իր շարժում սահմանն ունի, որից զէնը պատուվում է յարգել, պատկառանքի վարպետը... Անցնում են օրեր: Մի անգամ գործարանից դուրս գալուց յետոյ, կրկին բերուելու խնդիր մէջ են

չին րօպէս հետաքրքրվել հայոց դպրոցներով և մեր հասարակական բոլոր խնդիրներով:

«Բանահիշդ տարի իմ ամբողջ կեանքը նուիրեցի հայոց դպրոցներին...» առում էր նա մեզ իր մահվանից մօտ մի ամիս առաջ, կորցրի այդտեղ իմ առողջութիւնը, մաշեցի իմ բոլոր ոյժերը... և անա այժմ, ծերութեան հասակում, երբ տկար եմ և հիւանդ, և անկարող աշխատելու, Ներսիսեան դպրոցը, հայոց այդ ամենամեծ և ամենահարուստ դպրոցը, փոխանակ հողաւու իմ մասին, փոխանակ հողաւու իմ երկխոսների կրթութեան մասին, նոյն իսկ մի քանի ամիս, երբ ես հիւանդ էի, չը վճարեց իմ ուժերը, այլ կրօնից և դատերիս հետ միասին տուեց ուրիշներ... Կրան խօսքեր...

ՇՏՆՄԱՐԱՆՆԵՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Նորբեր Պետերբուրգում հրատարակվել է մի գիրք երկաթուղու դժի վրա շտեմարաններ շինելու խնդրի մասին: Գրքի հեղինակը յայտնում է այն միտքը, որ շտեմարաններ շինելու ծանրութեան վրա պէտք է միայն երկաթուղու վարչութեան վրա ընկնի, այլ նրա մի բաժնի պէտք է իրանց վրա առնեն տեղական արդիւնաբերողները, կարուածատերերը: Անդրկովկասի վերաբերութեամբ հեղինակը նպատակաւորում է համարում շտեմարաններ հիմնել Սլէվու, Սամարղի, Աբաշա, Նովոսիպի և ֆոթի կայարաններում:

Կրանց վրա կարելի է ապագայում աւելացնել և Արտաֆա, Հաջի-Կարու ու Գիւրգամիր կայարանները: Եթէ մասնաւոր անձինք՝ կալուածատէրեր, խոշոր առևտրականներ՝ ցանկանան իրանց շտեմարաններն ունենալ այդ կայարաններում, երկաթուղու վարչութիւնը կարող է նրանց շինութեան տեղ տալ ձրիապէս: Այդ խնդիրը առաջարկված է Արվլասեան Գիւրգամուտեան ընկերութեան քննութեան Զանակալի է, որ մեր երկրի արդիւնաբերութեան հմուտ անձինք յայտնեցին այս նոր առաջարկութեան մասին իրանց կարծիքը: Արքեպ մեր գիւրգամուտեանը, մեր առևտրականները կը համաձայնվեն ամբարների շինութեան, եթէ կը սպասեն գարձաւ մինչև միսիստրութիւնը ինքը ձեռնարկի այդ գործին:

Ինքը երկաթուղու վարչութիւնը դիմում է լրացուցիկներ միջոցով հմուտ անձանց, խնդրելով աշակցել խնդրի մշակութեան իրանց խորհուրդներով և ընտանական հայեցակցով:

Երբում Թերե դէմ խօսելուց յետոյ՝ պարտք պահանջող իսկոյն մերկացնում է թագաբան խնջալը և յարձակվում է հակառակորդի վրա: Հակառակորդը պաշտպանվելու նպատակով թեքում է, որ քար վերցնի և կրում է երկու թեքի հարուած. խնդրի միջոցով են ընկերները և արգելում: Հակառակորդը օգտվելով դէպքից, մտնում, ձեռքից խլում է խնջալը և դէն շարտում ասելով. «Ես անտէրը եթէ բանացնել չես իմանում, տեղից մի հանիլը ելի...»

Օր ցերեկով տեղի ունեցած այս դէպքը, այն էլ յայտնի փողոցներից մէկում, անտես է մնում օտարկանութիւնից:

Այսպիսով բաժան-բաժան են լինում և առանց որ և է հետևանքի ցրվում իրանց աները:

Երկրորդ անհնակը ընկերները ուղում են հաշտեցնել, հաւատացած լինելով, որ հետեանքը լաւ չը պիտի լինի: Հարուածներ կրողը, եթէ ինչպէս բարեկամ, ինչպէս իրանից մեծ վրէժխնդիր էլ չը լինի, նրա մտերիմ ընկերները այդ չը պիտի մարսեն, որ նա համարձակվել է օր ցերեկով փողոցի մէջ խնջալ հանել իրանցից մէկի վրա: Ինչպէս պարտք, աղամարդութիւն է համարվում խնջալ հանել-յարձակվելը կամ համարձակ կերպով ատորանակ արձակելը, նոյնքան էլ անպատուութիւն, վախկոտութիւն է յետ կենալը և վրէժխնդիր լինելը:

Միջոցով ընկերները մի կերպ վերջապէս համոզեցրել են, թէ հաշտվել պէտք է: Հարուածողը խոստովանում է, թէ սխալ է արել, որ խնջալ է հանել և այլն, բայց այնու ամենայնիւ յանձն չէ առնում դնալ և հաշտվել, պատճուրդ նա է, նա պիտի կենայ:

Եւ պատճուրդը թէ և իրան յանցաւոր չէ ճանաչում, բայց չէ ընդդիմանում. նա գնում է ինչպէս իրանից մեծի մօտ և հաշտվում...

(Կը շարունակվի)

Մամուլի միջոցով խնդիրը զննելու սկզբունքը շատ համակրելի է և մենք կարող ենք այդ կողմից չնորձաւորել այդ քայլը:

Յոյս ունենք, որ տեղական պայմաններին ծանօթ և հմուտ անձինք չեն զլանայ և ծուլանայ յայտնել իրանց կարծիքները յարեցված խնդրի մասին:

**ՆԱՄԱԿ ԳԱՐԱՉԻՉԱԳԻՑ**

Սեպտեմբերի 1-ին

Շրջակայ գիւղերում արդէն հունձը վերջանում է: Այս տարվայ բաւական ձախորդ հանգամանքները և, որ գլխաւորն է՝ անսպասելի երաշտութիւնը պատճառ եղան՝ Նոր-Բայազէտի գաւառի բազմաթիւ գիւղերում հացի պակասութեան Տեղացող անձրևները շատ քիչ օգնութիւն հասցրին, մասնաւորապէս որ ամեն տեղ անձրև չեկաւ: Յիրաւի, ինչ օգուտ մի կամ երկու ժամ տեղացող անձրևներէր, երբ վաղուց չոր, ցամաք, արևից ձեղքված աւազոտ ու յոգնած հողը կարօտ է յորը և երկարատև անձրևներին: Ինչպէս յայտնի է, այս տեղ հացի առատութիւնը գլխաւորապէս կախված է միայն մի պատահական դէպքէր, այն է առատ անձրևներէր: Աւելորդ է խօսել միւս, աւելի բարդ, արժանաւան, մշտական պայմաններին մասին, ինչպէս, օրինակ, հողի անբերրութիւնը, տակաւութիւնը, դանաղան հողային ներքին վէճերը և այլն, որոնք տարուց տարի թուլացնում են և քայքայում առանց այն էլ աղքատ գիւղացու տնտեսական վիճակը, զրկում, նուազեցնում են նրա ունեցած սէրը դէպի ազնիւ և խաղաղ երկրագործական աշխատանքը:

Ինչպէս երևում է, Նոր-Բայազէտի գաւառում, ընդհանրապէս այս տարվայ հացը միջակից էլ ցածր է և դեռ զանազան պատճառներից մէկն էլ սերմացուի պակասութիւնն է եղել: Բոլոր վարելահողերի 1/3 մասը հողի վրայ թէ վարած, սերմված լինէր: Սերմած արտերն էլ շատ գիւղերում երաշտութիւնից բոլորովին չորացան, մի քանի տեղ էլ հողի 1/4 արչին բարձրացան, արևի կիզիչ ճառագայթների տակ դեղինեցան ու հասկերը համարեալ դատարկ, անպտուղ մնացին: Պէտք է տեսնել, թէ ինչ մեծ խտրութեամբ և անսպասուելի հարեքութեամբ ընկած գիւղացին ամբողջ օրերով իր ընտանիքով, մեծ ու փոքր, ձեռքով քաղում են ու հաւաքում հասկերը:—Հնձելը անհնարին է, այնքան կարճ են մնացել արտերը:

Ամեն կողմից, մասնաւորապէս Արարատի և Գարաշիջաղի գիւղացիներէր միայն զանգառներ են լրսվում հացի պակասութեան մասին: Գիւղերում, աղքատ, չունեցող գիւղացիներին թիւը շատ մեծ է: Այն կանցին մի կամ երկու ամիս և գիւղացին ստիպված պէտք է լինի հաց առնել: Բայց ինչո՞ւ փող չը կայ, մնում է ծախել վերջին եղբ, կողմ և ընկնել զանազան վաշխառուների ձեռքը, թողնել իր օջաղը թախառել այս ու այն կողմ՝ ապրուստի ուրիշ միջոց գտնելու և կամ սպասել կողմնակի օգնութեան: Ահա թէ ինչ է սպասում գիւղացիներից շատերին:

Մի ամսից աւելի է, որ անձրև չէ գալիս, ապրանքի արտը չը կայ, հողը բոլորովին չորացել, աղանձվել է և շատ տեղ այնպիսի ձեղքուածքներ է տուել, որ մարդու ոտը ազատ մէջն է ընկնում: Այսպիսի երաշտութիւն վաղուց տեսնված չէ այս կողմերում:

Թ. Խալ.

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Մեր ձեռքը հասած տեղեկութիւնները ստիպում են հայոց հասարակութեան ուշադրութիւնը նորից հրաւիրել այն սովի վրա, որի նշանները կրկին երևում են թիւրքաց-Հայաստանի մի քանի գաւառներում: Չմեղք մտնելով է, և մի քանի տեղերում, Սասուն, Վասպուրականի մի քանի տեղերում, Երզրումի վրայտեղ մի քանի գաւառները, վատ հունձի պատճառով, նորից սովի առաջ են կանգնած: Երբ մի ժողովուրդ մի տարվայ սովից չը կազդուրված, յաջորդ տարին նորից ենթարկվում է ծանր սովի, նա կարող է բոլորովին ոչնչանալ, եթէ օգնութիւն չը հասնեն և հաց չը տան:—Պէտք է մտածել այդ մասին:

Տեղակալ երեմիա եպիսկոպոսը, երկի, սեպտեմբերի 15-ին, Ելմիածնից թիֆլիս եկաւ, բժշկվելու նպատակով:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսցի հանգուցեալ Բաղի եղիազարեանը կտակել է 2000 բուրդի Ներսիսեան դպրոցին, 500 բ. կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան և 500 բ. թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան: Հանգուցեալի ժառանգները արդէն յանձնել են այդ գումարները վերոյիշեալ հաստատութիւններին:

Կովկասեան զինուորական նահանգական դատարանը, ըննելով սեպտեմբերի 12-ի նիստում Անդրկովկասեան երկաթուղու կառավարչի օգնական Կորչի սպանութեան համար մեղադրվող Գարչնիին դործը և ճանաչելով նրան մեղաւոր այդ սպանութեան մէջ, դատապարտեց նրան մահվան պատժի կանխադանի միջոցով:

Մենք անդադար գանդառներ ենք լսում, որ Ներսիսեան դպրոցի կառավարչները վերին աստիճանի անխնամ դրութեան մէջ են, և այդ պատճառով թէ բոլորովին քանդվում են և թէ քիչ եկավում են տալիս: Գարձնում ենք դրա վրա հարաբարձութեան ուշադրութիւնը:

Չորեքշաբթի, սեպտեմբերի 14-ին, քաղաքային վարչութեան բոլոր անդամներին ներկայութեամբ տեղի ունեցաւ ձայնաւոր-բժիշկներից կազմված յանձնաժողովի նիստը՝ սանիտարական-բժշկական տեսչի պաշտօնի համար կանդիդատներ ընտրելու նպատակով: Մի քանի կանդիդատներ հրաժարվեցին քուէարկութիւնից, և միայն երկու հոգի համաձայնութիւն տուին քուէարկվել, այն է Ստեփանեան և Վարդանեան բժիշկները: Եւ որովհետեւ 15 ձայնաւոր բժիշկները ներկայ էին նիստին միայն 7 հոգի, վճռվեց այդ նիստը կայացած չը համարել և դրա փոխարեն նոր նիստ նշանակել և հրաւիրել բոլոր ձայնաւոր-բժիշկներին, նախազգուշացնելով նրանց, որ այդ նիստը կայացած կը համարվի՝ որքան էլ որ լինի ձայնաւոր բժիշկների թիւը:

Մենք գովեստով խօսեցինք Սեղրակ Մանդիւնեանի մասին, երբ նա հրաժարվեց Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնից, չը կամենալով ընդունել անկանոն ընտրութիւն: Յաւուր ենք, որ նոյն գովեստով չենք կարող խօսել նոյն Մանդիւնեանի մասին, երևանի թիւական դպրոցի վերաբերմամբ: Մեզ հաղորդում են, որ երևանի թիւական դպրոցի հոգաբարձութեան ընդհանուր արամադրութիւնը դէմ է Մանդիւնեանին, ուղում են նոր տեսուչ հրաւիրել:—Բայց Մանդիւնեան զանազան միջոցներով ձնչում է գործ դնում, որ անպատճառ տեսուչ մնայ:

Սեպտեմբերի 12-ից մինչև 14-ը թիֆլիսի Միջաշխեան հիւանդանոցը մտել են 3 մարդ, որոնք խօլերանային հիւանդութեան նշաններ ունեն:

Մեզ հաղորդում են, որ այս տարի թիֆլիսի զինվորականներին և ծխական դորոնցներին մեծ թուով խնդիրներ են տուել, ուսումնարան մտնելու համար: Սակայն տեղի պակասութեան պատճառով խնդրատուների մի տասներորդ մասն էլ չէ ընդունվել:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը, ինչպէս հաղորդում է «НОВОСТИ» լրագրից, միջնորդում է բաց թողնել զանձարանից 140.195 բ. թիֆլիսի 2-րդ գիմնաշխարհի շինութեան համար:

«НОВ. ОБОЗР.» լրագրին հետագրում են Պետերբուրգից, որ կովկասի կառավարչապետի զեւանատան փոխ-դիրեկտոր Միցկիվիչ նոյն զեւանատան դիրեկտոր է նշանակվում:

Մենք անդադար ստանում ենք երևանից հիմնաւոր և հետաքրքրական թղթակցութիւններ, որոնք վերաբերում են երևանի թիւական դպրոցի այժմեան վիճակին: Եստ ցաւում ենք, որ մեզանից անկախ պատճառներով չենք կարող այդ թղթակցութիւններէր և ոչ մէկը տպագրել:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիները, բոլոր դպրոցներում առանձին ուշադրութիւն կը դարձնվի վաշխազրութեան դասերի վրա: Միջնորդութեան այդ կարգադրութեան շարժառիթն այն է, որ ուսումնարաններէր շատերը շատ վատ և անորոշ ձեռք ունեն:

«Տարադի» մէջ կարդում ենք հետեւեալը: «Ուրախութեամբ հաղորդում ենք, որ տիկին Մարգարիտ Ալեքսանեանը, Շուշում, Ղազանչեցոց եկեղեցու մօտ գտնվող իր սեպական երկարկանի քարայն տունը բազով, պարտիզով՝ 10—12 հազար բուրդի արժողութեամբ, կտակում է կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան այն պայմանով, որ տան արդիւնքի կիսով ուսում ստանան՝ մի տղայ Գեորգեան ճեմարանում՝ ի յիշատակ իր Պետրոս ամուսնու, իսկ մի աղջիկ էլ Գայեանեան ուսումնարանում ի յիշատակ իր կիսուր ստանու, իսկ մի աղջիկ Երզնի քաղաքի մի քանի դատաւալ չքաւորներին: Անշուշտ, ուրիշներն էլ բարի օրինակ կտանեն այդի Մ. Ալեքսանեանից և կովկասի հայոց միակ Բարեգործական ընկերութեան դրամադուրի մեծացներուն կը նպատեսնայ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 11-ին երկրորդական, Ղազանչեցոց եկեղեցում կարգապէց կաթողիկոսի կոնդակը, որը բերել է Ալվազեան եպիսկոպոսը: Այդ կոնդակով վհահապառ քարոզում է համերաշխութիւն առաջնորդին ու հոգաբարձուներին. նոյնպէս յայտնում է, որ իր Շուշու գալը յետաձգում է մինչև դարունայ:

ՇՈՒՂԱՎԻՐԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 9-ին, Շուշուից թիֆլիս տանող ճանապարհին ականատես եղանք մի սխալ տեսարանի: Շուշուից եկող հանրակառքը շուտ էր եկել, տակոյն արել նստածներին: Զանապարհին, Բորչալուի դաշտում, վայր էին թափված թշուառ ճամբորդները: Որը գտնվում էր մերձ ի մահ, որի մէջքն էր կտորվել, որի գլուխն էր ջարդվել, որի դէմքն այլանշակվել: Կտուքի շուտ գալու պատճառը կառուպանի հարբածութիւնն էր: Այդ բոլորը իր աչքով տեսաւ Բորչալուի գաւառապետի օգնականը, որ բնակվում է Շուշուէր: Վնասվածներին ուղարկեցին թիֆլիս:»

ԷՋՄԱՍՏԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Սեպտեմբերի 11-ին, կիրակի օրը, Շամախու առաջնորդ Սմբատ արքեպիսկոպոսը, կաթողիկոսի ներամանով, կուսակիցն քանանայ ձեռնարկեց Ելմիածնի միաբան սարկաւազներից եթիւն, որոնց անուններն էին՝ Վահան, Կարապետ, Ստեփան, Սողոմոն, Ղևոնդ, Յուսիկ և Տիգրան: Բայց վաճանկից, մնացածները Նահապետ վարդապետի դատարարականներն են: Սարկաւազները, ձեռնադրութիւնից առաջ, հոգեհանգիստ կատարել տուին ձեռնարանի հիմնադրի գերեզմանի վրա:»

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ**

ԵԿԻՊՏԱԿԱՆ ՓԱՇԱՆԵՐԻ ԴԱՏԱ

Ինչպէս հեռագրերը հաղորդեց, այս օրերս կայիլիի դատարանում ընկում էր մի հետաքրքիր գործ, որը վերաբերում էր երկրպագական հինգ փաշաներին, որոնք մեղադրվում էին սարկաւազները զննելու համար: Այդ գործի պատմութիւնը հետեւեալն է:

Յուրի ամսի վերջը կայիլիի շրջականները եւեալ մի քարաւան և բերեց վեց ջահիլ սարկաւազներով: Կրանցից երեքին զննեց օրէնսդրական խորհրդի նախագահ Ալի-փաշան, իսկ մնացածներին զննեցին երեք ուրիշ փաշաներ: Այդ բանը տեղեկացաւ գերի գնդներին հալածող յանձնաժողովը, որի հրամանով և ստիպմամբ բոլոր շուրս փաշաները և գերեզմանները զինուորական դատարանի ենթարկվեցին:

Փաշաների պաշտպանը ապացուցանում էր, որ 1877 թ.ի անպօքեղկտական զանազորի հիման վրա, արգելվում է միայն գերեզմանաւորութիւնը երկրպագութեամբ, և այդ նոյն զանազորի հիման վրա օրէնքը խիստ կերպով պատժում է գերեզմանաւորներին, բայց ոչ մի խոքը չէ ասում նրանց զննելու մասին: Միւս կողմից մեղադրողը հաստատում էր, թէ որովհետեւ գերեզմանաւորութիւնը երկրպագութեամբ արգելված է, այդ պատճառով սարկաւազներին գնող փաշաները մասնակից են եղել գերեզմանաւորների կատարած յանցանքին: Բացի դրանից, ներքին գործերի միջնորդ Բիադ-փաշայի 1880 թ.ի շրջաբերականի մէջ բացատրված է, որ վաճառում անհնարին է առանց գերեզմանի և որ այդ պատճառով գնողները պէտք է

ծախողների մեղակից համարվեն և պէտք է ներանց հետ միասին պատժի ենթարկվեն, այսինքն 5 տարով բանտարկութեան դատապարտվեն:

Ձինուրական դատարանը մի վճիռ կայացրեց, որով շուրս վաճառողներ և երկու գործակալներ մեղաւոր ճանաչվեցան, իսկ գնողները ազատ՝ քրեական պատասխանատուութիւնից: Այդ դատաւճիռը առաջարկվեց երկրպագական գործի հրամանատարի հաստատութեանը, որը վաւերացրեց վաճառականների վերաբերմամբ կայացրած դատաւճիռը, բայց մերժեց հաստատել գնողներին վերաբերեալ դատաւճիռը:

**ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՍԵՑ**

Կ. Պոլիս, սեպտեմբերի 7-ին

Պատրիարքական տեղապահի հաստատութիւնը և իր ընդունելութիւնը, առօք փառօք պատրիարքարան իջնելը, տուած այցելութիւնները, ժողովներուն նախագահելը, հարկաւ հաղորդված է ձեռարդէն: Գիմաքեան կը տեսչայ պատրիարքութեան, բայց իսկպէս պատրիարքութիւն կընէ և ոչ տեղապահութիւն:

Ուրախութեամբ իմացանք, որ Երզրաղի բանտէն 170 բանտարկեալ աղտուած են՝ անգլիական միջամտութեան շնորհիւ: Միւս բանտարկեալներու դատը պիտի նորէն տեսնուի:

Խապուղի հրդեհի դոնորը մեծաւ մասամբ հայեր են, 75 տուն, շատ քիչ յոյս և քանի մը տուն ալ հրէայ և տաճիկ տուններ: Ասոնցմէ 460 հողի ամեն միջոցէ գուրկ են և ամենաթշուառ վիճակի մէջ: Գիւղի «Աղքատանամ» ընկերութեան սրճած օգնութիւնը շատ չնչին է. շատ աւելի չնչին ու ոչինչ է այլ թաղերի հասած օգնութիւնը: Ասոնց դժբաղդութիւնէն 2—3 օր է, որ բաւական ցուրտ է և ասոնց վիճակը օր աւուր պիտի գեշնայ: Կառավարութիւնը առ այժմ 160 օխայ հաց միայն տուած է. այս է կառավարութեան ամբողջ օգնութիւնը: Նիկիոմիդիայի Արաւանպէկի հրդեհը (500 տուն, այրեցաւ) բոլորովին արձագանք չը գտաւ հոս և ոչ կառավարութեանէն որ և է ներպատ, օգնութիւն եղաւ: Պոլսի հարուստները քար, ապառաժ դարձած են: Ասոնց ապառաժ արտերը անգրգայ մնացին բոլորովին, ինչպէս երկրաշարժի արկեանքներու, նոյնպէս Խապուղիի և Արաւանպէկի հրկեանքներու: Պատրիարքական տեղապահն ալ այս մասին տակաւին ոչ մի բանի չը ձեռնարկեց:

Գաւառներէն ստացուած լուրերը շատ գէշ ու սրտաճմրկ են: Ընդհարումներ թիւրք պարկական սանձանագրութիւններու վրա, ընդհարումներ Մուշ, Վան և ուրիշ կողմեր:

Սասուն սովի ճիւղակներէն սաստկապէս կը առատայի. շրջականներու հետ շատուց ի վեր ամեն յարաբերութենէ ու հաղորդակցութենէ կտրուած են և ստիպել կը ստուապին սովէ, աւնթութիւնէ, որ և է օգնութիւնէ գուրկ: Ասոնց վիճակը ստիպել է, իսկ մէկ ամսէն, գոցեց և 10—15 օրէն ասոնց լեռները ձիւնով կը ծածկուին, և այն ատեն ասոնց կը մնայ կամ սովածան կորնչել, կամ քաշել պէս մեռնել. բայց անօթի մարդը կրնայ դէպ խաղցնել և թշուառ հալածակ, այս ալ հարց է: Տաճիկները և Համիդէի դուրքը այրած են Ենիկի, Միւսի և ուրիշ հայ գիւղ մը ամբողջապէս: Ասոնց բնակիչները փախած են:

Մուշի հունձը այս տարի դարձեալ շատ անյաջող է եղած. հոն հացը նորէն կը սուղի և այս անգամու սովը աւելի սաստիկ, աւելի դժգոհն ու աղէտաբեր պիտի լըլայ: Եթէ օգնութիւն չըլլայ, այս միակ հայաշատ գաւառնալ պիտի պարպուի, դատարկուի, զրկվի հայ տարրէն: Այս և անցեալ տարվայ սղութիւնը արդէն բաւական նուազեցուց այս գաւառի ժողովուրդը, իսկ յառաջիկայ տարի, ձմեռն բոլորովին ամայնաւոր ամեն նշաններ կը տեսնուին, եթէ օգնութիւն, նպատ փութով շատ փութով չը հասցուն, որովհետեւ 1 1/2 ամսէն ձմեռը կուգայ այն կողմերը և ալ ամեն անց ու դարձ կը դադարի:

Խոմբ մը դաւաճան, աղբուրաց, վաճառված, անխիղճ մարդիկ ամեն կերպով կաշակցին կառավարութեան և կը ջանան ազդը կործանել: Արդէն վարձկան թղթակիցներ սկսան մի քանի տեղերի հայ թերթերու մէջ ևս անամօթաբար գրել և ծառայութիւն մատուցանել:

Խ—բով

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրող լեհացիները վճարել են բոլորովին խզել իրանց կապը պայական եկեղեցու հետ...

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Գրականական գերեզմանատեղի» յարույթին առաջ քարտեզ, որի անունը յիշել էինք, իբրև ժամանակագրական փաստ:

Լևոն XIII պապը եռանդուն կերպով աշխատում է միացնել կաթոլիկ եկեղեցու հետ հերձուհածողական եկեղեցիները...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՆՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՈՒԲՈՂ, 14 սեպտեմբերի: Պետական խորհրդի մեջ մտցրած են:—Հարգարկացույթան ճանապարհների միջխտրի առաջադրույթները...

ԽՈՒՄԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՆԻՆԻ ԲԱՍՆԻՆԻ ԶԵՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ Մ. ՄԵԼԻՔԱՆԱՍՍՅԱՆ

ԵԳՕՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԱՊԻՍԵԱՆ
Վախճանվեց լքմիածնում: Այդ մասին հանգուցեալի աղջկը՝ Եկատերինե Եգորեան...

Այս սեպտեմբերի 15-ից բացված է ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ:

Ի. Ե. Ա. Բ. Ր. Փ. Օ. Ն. Բ. Բ. Ե. Ն. Ե. Բ.
Յանձն է առնում ՀԱՇԻՍԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԱԿԻ և ԱՌԵՏԻՍԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ
պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, առանձին, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն...

ՇՈՒՍԱՎԵՐԻ ՇԻՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԱՆ
Համախոսական թերթի, կայացած 4-ին սեպտեմբերի 1894 թվին, № 472, յայտարարում է...

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐԱՆՈՑԻ
Հոգաբարձույթները, Համաձայն օրագրական իր որոշման 31-ից անցեալ օրոտոտի № 50, պատիւ ունի յայտնել հայ հասարակութեան...

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
ց 1-ն Սեպտեմբերի 1894

Table with 7 columns: Description, Debit, Credit, Balance, and two more columns for detailed accounting. Includes items like 'Գրամարկ (առձեռն թղթադրամ)', 'Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր', etc.